



# Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր

Ամսաթիվ՝	22 նոյեմբեր 2014թ.
Վարկի համար՝	2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3
Պայմանագրի համարը և անունը՝	Պայմանագրի 03-IC-001 – Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհային հատվածների հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) պատրաստման և իրականացման դաշտային աշխատանքներին աջակցություն և համակարգում (Դաշտային աշխատանքների համակարգող)
Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝	03 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել 03-IC-001 պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար:

Պայմանագրի պայմանները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման ուղեցույցների համաձայն:

Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

## ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝

Գործակալությունը կվարձի ազգային անհատ-խորհրդատուի, ով ունի նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ բազմագործառնության թիմերի, հողի օտարման և տարաբնակեցման հետ կապված աշխատանքների կառավարման և համակարգման ոլորտում: Դաշտային աշխատանքները համակարգողի հիմնական գործառնություններն են՝

- 1) համակարգել ամբողջ խմբի գործունեությունը,
- 2) աջակցել ծրագրի իրականացման կենտրոնին (ԾԻԿ) անցկացնելու տեղեկատվական արշավներ՝ տարաբնակեցման քաղաքականության և ընթացակարգերի մասին ազդեցության ենթակա համայնքներին տեղեկացնելու համար,
- 3) աջակցել ԾԻԿ-ին կազմակերպելու և իրականացնելու ազդեցության ենթակա անձանց ծանուցումը հանրային գերակա շահի ընթացակարգերի վերաբերյալ,
- 4) աջակցել ազդեցության ենթակա անձանց իրենց բողոքների լուծման հարցում, ինչպես նաև նրանց, ովքեր ունեն բողոքներ՝ հետամուտ լինել բողոքների լուծմանը,
- 5) օգնել ԾԻԿ-ին արձագանքելու հողի օտարման և տարաբնակեցման ծրագրերի պատրաստման և իրականացման փուլերի ընթացքում,
- 6) ստուգել և թարմացնել սկզբնական ազդեցության գնահատումը և մանրամասն չափագրման հետազոտությունը՝ հիմք ընդունելով փաստաթղթային վերանայումները և անհրաժեշտության դեպքում՝ դաշտային հետազոտությունները;
- 7) ԾԻԿ-ին շարունակաբար ներկայացնել ՀՕՏԾ առաջընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, վկայագրեր և տվյալներ, բացահայտել և քննարկել ՀՕՏԾ պատրաստման ընթացքում հայտնաբերված խոչընդոտներն ու բարդ դեպքերը,
- 8) ԾԻԿ-ին՝ օրինականացման ծրագրի իրականացման ընթացքում հանձնման ընդունման ակտերի հետ տրամադրել նոր գրանցված սեփականության վկայականները,
- 9) ԾԻԿ-ի պահանջով տրամադրել իրականացման առաջընթացի հաշվետվություններ և տեղեկություններ՝ վերջինիս կողմից սահմանված պահանջներին համապատասխան,
- 10) ծրագրավորել և վերահսկել ՀՕՏԾ իրականացման գործընթացը և իրականացնող թիմի կողմից կատարված աշխատանքների ամբողջական տեղեկատվական բազան, որը արտացոլում է իրականացման գործընթացը և վարվում է իրականացնող թիմի կողմից՝ ՊՈԱԿ-ի Իրավական և արտաքին ազդեցության ստորաբաժանման հետ համատեղ,

- 11) ԾԻԿ-ին շարունակաբար ներկայացնել ՀՕՏԾ աշխատանքների առաջընթացի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, վկայագրեր և տվյալներ,
- 12) ՊՈԱԿ-ին ներկայացնել ազդեցության ենթակա անձանց կողմից ստորագրված օտարման պայմանագրեր և լրացուցիչ փոխհատուցման համաձայնագրեր՝ հանձնման-ընդունման ակտերով,
- 13) ՊՈԱԿ-ին ներկայացնել օտարման պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի հիման վրա հողերի նոր սեփականության վկայականները՝ գրանցված ՀՀ-ի անվամբ հիմք ընդունելով օտարման պայմանագրերը,
- 14) աջակցել ԾԻԿ-ին կազմակերպելու և իրականացնելու ազդեցության ենթակա անձանց ծանուցումը հանրային գերակա շահի ընթացակարգերի վերաբերյալ գործընթացի իրականացման ընթացքում (ներառյալ սեփականության բռնագրավման փուլում),
- 15) դատարաններում ապահովել անհրաժեշտ տեղեկատվության, տեղեկանքների և տվյալների ստացումը պետական, համայնքային և այլ մարմիններից՝ հողի օտարման գործընթացում,
- 16) ԾԻԿ-ին ներկայացնել ՀՕՏԾ ամսական առաջընթացի և ավարտական հաշվետվությունները:

Ընտրության եղանակը՝	Անհատ խորհրդատուի ընտրություն (ICS)
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ վճարումներով
Գնահատված բյուջեն՝	27,000.00 (քսանյոթ հազար) ԱՄՆ դոլար (առանց հարկերի)
Մասնագիտական անձնակազմի ներգրավում՝	18 մարդ-ամիս
Առաջադրանքի իրականացման տևողությունը՝	18 ամիս
Աշխատանքների սպասվելիք սկիզբը՝	16 դեկտեմբերի 2014թ.
Աշխատանքների սպասվելիք ավարտը՝	15 հունիսի 2016թ.
Խորհրդատուների տեսակ՝	ազգային անհատ-խորհրդատուներ

**Հայտերի ներկայացում՝**

Հետաքրքրվող մասնակիցները կարող են գտնել և բեռնել հետաքրքրության հայտի ձևն ու ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից՝ <http://www.cms.adb.org>: Հետաքրքրության հայտի ձևը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև [amirkhanyane@northsouth.am](mailto:amirkhanyane@northsouth.am) և [abrahamyank@northsouth.am](mailto:abrahamyank@northsouth.am) էլեկտրոնային հասցեներին ուղարկելով էլեկտրոնային նամակներ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 03 դեկտեմբերի 2014թ.:

**Կազմակերպության անվանումը՝** «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

**Հասցեն՝** ՀՀ, ք. Երևան 0002, Թումանյան փողոց, թիվ 38 շենք

**Հեռախոս՝** +374-60-50-68-70 (71)

**Հարցերի համար դիմել՝** Էռնա Ամիրխանյան, Կարինե Աբրահամյան

**Էլեկտրոնային հասցե** [amirkhanyane@northsouth.am](mailto:amirkhanyane@northsouth.am), [abrahamyank@northsouth.am](mailto:abrahamyank@northsouth.am)